

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԵԾԱՏԱՂԱՆԴ ԱՐՈՒԵՍԱԳԷՏ
ԷՄԻԼ ԳԱԶԱԶԻ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Սիուրթեան Հարաւային Գալիֆորնիայի Շրջանակա-
յին Յանձնաժողովը ՀԲԸՄ Ալեք Մանուկեան Կեդրոնին մէջ, Փասարինա, Շաբաթ, Նոյեմբեր 7ի
երեկոյեան ժամը 7:30ին մեծարանքի երեկոյ մը կազմակերպած էր՝ նուիրուած մեծարադանդ
արուեստագէտ Էմիլ Գազազի:

Բացման խօսքը կատարեց «ՀԲԸՄ Մեծարանք Գազազի» Վարչութեան Արեւնապետ՝ Հայկ
Մարլեան: Միջազգային մրցանակներու արժանացած Էմիլ Գազազի վաստակը արտացոլացնող այս
ցուցահանդէսը տեղի ունեցաւ Նոյեմբերէ 5-7, 2009, ուր աւելի քան հազար անհատներ այցելութիւն
տուին:

Նկարի ունենալով աշխարհահռչակ քանդակագործ եւ նկարիչ՝ Էմիլ Գազազի մատուցած
սքանչելի վաստակը եւ արուստի գործերը, Առաջնորդ Սրբազանը իր խօսքին մէջ գնահատեց
համամարդկային բնոյթ ունեցող արուեստի իր տաղանդները եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն
Հայոց Կաթողիկոսի կողմէ զինք պարգեւատրեց Սուրբ Սահակ եւ Սուրբ Մեսրոպ Շքանշանով: